

ԴԱՅՋԵԱԼ ՀԱՅՆԱԳՐԵԱԼ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆԻ ՃԵՄԱԲՐ

Զեր մանկական երգարանի վերաբերութեամբ Արարատում տպուած իմ նկատողութիւններիս մէջ ցոյց տուած երգերիդնշանաւոր սխալների գէմ փոխանակ հաւանական առացոյցներ բերելու վայր ի վերոյ կոշտ և կոռուիտ սրահիօսութեամբ ծայրէ ի ծայր կամենումէք հերքել Մէջուն 25 համարում այն սկզբունքով, որ ես առաջին՝ այբ բեն չիմանալով, և ձայնագրութեան տեսութեան հետ ծանօթ չլինելով, յանզգնել եմ ձեզ պէս մի հոչակաւոր համարդէպէր (°) հեղինակութիւն քննութեան առնել. և երկրորդ՝ որ ես երկու անհրաժեշտ զիտութիւններից անտեղեակ լինելով, այն է արդի մանկավարժութիւնից և ջութակ ածելուց, հետեապէս և ձեր աշխատութիւնը ապարդիւն ցոյց տալու մէջ, իմ կարողութիւնից վեր էր. և այդ իսկ ինքնահաւառն մեծամտութեամբ ստորութիւն էք համարել ձեզ, քննութեան ենթարկել բնաւ երգարանի արժէք չունեցող հատկուոր և անախորժ երգերի մի շարք կանխապէս զուշակելով և այն կորստաբեր վասնզը, որոց վերայ անաշառ քննադատը զրիչ խաղացնելով, պիտի զրկէր ձեզ հացից, Այս, մինչդեռ մէջը հացի խնդիր կայ, այս, մինչդեռ այս տեսակ պարագաների մէջ հաց շնորհողին շողոքորթել կայ և հետեապէս դատարկածեն չզառնալ, ովլ լիներ արդեօք ձեր տեղ, որ այդպէս ընթացք չբռնէր իւր զրականական թերութիւնը ստարներից ծածկելու համար:

Իմ այր բնն չիմանալս, և ձայնագրութեան տեսութեան հետ ծանօթ չլինելս չափումէք այն կէտից, որ ես չեմ ախորժել հաւանել առհասարակ երգերիդ մեծագոյն մասին, սխալ համարելով թէ նոցա ձայնը և թէ չափերի զործածութիւնը, այս, և չպիտի հաւանեմ հաստատամտութեամբ, մինչդեռ նոյն իսկ քաջահամրաւ ուսուցչիդ խմբագրած երգերի զլիսովին սխալ լինելու և Եւրոպական նօտայի հոտ չառնելն անգամ, կապացուցանեմ առաջին, մի համբաւաւոր Հայկական և Եւրոպական ձայնագրագէտի մեր ուսուցչապետ ալ, Թաշճեանի նկատողութիւններով, որի ձեռքը անցնելով և սրբագրելով քո ձայնագրած երկու երգերը, աւելացնումէ մէկի տակին հետեւալ տողերը և կերկէր որ այս երգը Եւրոպական նօտայէն առնելով, հայկականի վերածեր է, բայց Եւրոպականը լաւ չուսանելով, հայկանի թարգմանութիւնն ալ սխալ է ըրած, Ուրեմն այս տողերը կարդալով բարեմիտ ընթերցողը շպիտի եղբակացնէ, որ չորս տարուայ ընթացքում ջութակ ածել սովորել էք ոչ թէ նորա համար, որ օգուտ քաղէք երգեր ձայնագրելու ժամանակ, նոցա մէջ երբեմն պատահած անոռոշ և անզիւրըմբոնելի կիսաձայները կանոնաւոր գուրս բերել, այլ թէ ուժէ և պարագ ժամանակներդ ածելով զուարձանաք և զուարձացնէք շուրջդ համախմբուած գողտրիկ մանուկներից, ինչպէս զա բնական է ամեն մի զբասաւէր մարդկան, Երկրորդ, երգիծարան շաղփաղիութիւններով

Հաւատացնումէք երգեցողութիւնից անտեղեակ ընթերցողին. որ ևս « այլ կըքերից և զանազան պատճառներից դրդուած » առանց զնահատութեան, ձեր անդին աշխատութիւնը, ապագայ սերունդի զարդացողութեան այդ վրկարար միակ միջոցը, անիդմտաբար այն անպիտան գրեանց կարգն եմ դասել, որոց վերայ նայողը անախորժ հաճութեամբ պիտի զգուշանայ ընթերցասիրութենէ, և հետեապէս դորանով շօշափել եմ ձեր պատիւը, արատաւորելով նոյն և ի սփիւռս աշխարհի ժողովրդականացած ձեր հանրածանօթ անունը:

Փառքով բարձրանալու ցանկութիւնը արդիւնաւոր գործ է պահանջում, և այդպիսի մի փառաւոր գործ ունեցողին անարգողը, ամենից վասթար և անմիտ արարածը պիտի ճանաչել աշխարհի մէջ, Երկրորդինք ուրեմն կարձառօտաբար ձեր գործի քննութիւնը, որպէս զի պարզուի, ոչ զուք փառքով բարձրանալու արժանաւորութիւն ունիք այս կէտում, և ոչ ես անարգվելու այնշափ, որչափ ախորժել է անարգել ձեր լեզուն և սիրտը:

Երգարանիդ մէջ դասաւորուած, մանկանց ճաշակին և հասկացողութեան ըստ ձեզ յարմար ոտանաւորները կարծեմ ձեր սեփհական հեղինակութիւնք չեն, այս կիսոստովանիք, նոցա ունեցած արևելեան և արևմտեան երգերի ձայները՝ կարծեմ նոր ինորոյ ձեր գլուխիք չէ ստեղծել. այս էլ կիսոստովանիք, գոցա ի տեղ հաւաքման պատճառաւ՝ կարծեմ ծանր պարտուց տակ մտնելով յերկրէ յերկիր չէք թափառել քաղցած ծարաւ, ինչպէս անումն հետաքրիքի ճանապարհորդները մի առարկայի առիթով. այս անշուշտ կիսոստովանիք, ուրեմն ձեր աշխատութեան լոկ արդիւնք միայն մնումէ երկու բան, մին, այս զրբից, այն տեսրից երգեր արտազրել. և միւս, նոցա վերայ անսխալ ճայնանիշեր զնել. և եթէ վերջինք ևս սխալ են, ուրեմն ինձ տգէտ ու համբակ կոչելու, ընդ նմին և այսպիսի մի դիրք քննադատելու պաշար չունենալ ճոռմաբանելու՝ անպատ և աւելորդ խօսքեր չէին.

Ահաւասիկ իբրև ապացոյց խօսքերիս, բաւական կհամարիմ դնել այս տեղ ձայնազրագէտ ընթերցողին նկատելու, անսխալ համարած երգերիցը երկու օրինակ նըն ու բայց երգից, որոնք տպուած են երգարանիդ և դասազրիք մէջ. մէկ որչափ զանազանութիւն ունին միմեանցից ձայնանիշներով, զուք էլ նկատեցէք:

Խըդաբանիդ հէջ պուստած, էլէս 50:

24-ր: 6/8

Ա ՛ ՛ ՛ ՛ : Ա ՛ ՛ ՛ ՛ ՛ ՛ ՛ ՛ : Բ ՛ ՛ Բ  
Երբ որ բաց ուին դու նե բն յու սոյ եւ մեր երկ-  
բանած: Բ ՛ ՛ ՛ Ա ՛ Ա ՛ Ա ՛ Ա ՛ Ա ՛ Ա

բէ ն փախ տայ ձը մեռն. յըք նաղ եր կիրս մեր Ար-

մ ն պ ա մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս  
 մ ե նիոյ երբ փայ լէ իւր քաղց ըի կ օ ըեր, երբ  
 մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս  
 ո ր ծի ծառն ի բոյն դառ նայ երբ որ ծա ռե բն  
 մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս  
 հագ նին տե րեւ ցան կամ տես նե ւ զիմ  
 շամաս մ բ մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս  
 կի լի կեա աշ խարհն որ ինձ ե տուր ա րեւ  
 մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս մ ս  
 ե տուր ա րեւ:

Դաստիքի Ձջ աղա-ած, էջես 55.

Չէ-ի. 6/8  
 մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 երբ որ բա ցուին դըռ ներն յու սո յ եւ մեր երկ ըէ ն  
 մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 փախ տայ ձը մեռն ըրք նաղ եր կիր մեր Ար մե նիոյ  
 մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 երբ փայ լէ իւր քաղց ըի կ օ ըեր երբ որ ծի-  
 մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 ծառն ի բոյն դառ նայ երբ որ ծա ռերն հագ նի ն  
 պ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 տե րեւ ցան կամ տես նե ւ զիմ կի լի կեա  
 մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ մ  
 աշ խարհն որ ինձ ետ իւր ա րեւ ետ իւր ա րեւ:

Ի՞նչ էլք սպասում ուրեմն, և այսպիսի սխալներիդ համար պիտի  
 գափնիներ ոլորէի ձեր զիսին, բնչպէս արել և արդ Քութայիսի ձայնա-  
 գրութեան ուսուցիւ քո ազգական պ. Եղիշէն, որը մի շարք գովասանք-  
 ներ ձեզ նուիրելուց յիտ՝ նոցն աշխատութեանդ մասին, իբրև անաշառ  
 քննադատ, գրքից թերութիւններ միայն գտնումէ այսչափ. Ափսոս որ  
 երգերը թուով սակաւ են, որին՝ և իմ համեստ պատասխանը. Ափսոս  
 որ քո աշքերն էլ բարեկամի աշքեր էին, և ոչ քննդատի:

Նկատողութեանս մէջ՝ յիշուած, Հբէլուն վաւելուն երգի երկորդական  
 էյից սկսիլը սխալ համարելով, մերժումէք. և որ աւելի ծիծաղալին է

իրրեւ քաջ նօրայագէտ կամակորութեամբ պնդումէք թէ պէտքէ զրել առաջնական հշյից կամենումէք ուղարկեմ միւնոյն երդի ձեռագրի պատճենը որ զրել էք գարձեալ երկրորդական հշյից և այդ սխալ չէ նոյնագէտ և նրբ որ բայց երդի չի չափով լինելը չէք ընդունում այլ ով պէտքէ զրել ասումէք ով զրել էք այն պատճառաւ որ միջի աւելորդ ձայները հանելով արմատականն էք միայն թողել ապա թէ աւելորդ ձայները չհանելիք ի՞նչ չափով պիտի զրէլք կնշանակէ որ ամեն բան անհամակացողութեամբ և ըստ քմաց էք զրել և ոչ Եւրոպական ձայնագրութեան մէջ կարծեցեալ զարգացած կատարեալ հմտութիւնն է թոյլ տուել զրելու և հարկէ ստախօսի պարտքն է միշտ պարտակել մի սուստ երբ ակներեւ տեսնումէ նորանից վտանգ այսպէս և Թուք Երբ ձեզանից հարցնէ մի Եւրոպացի ձայնագրագէտ թէ ինչո՞ւ սխալ են երգերիդ ձայները կարկատուն ստերով պիտի հաւատացնէք թէ հայկականի կանոնը տյդպէտ է պահանջում սխալ չէ նոյնագէտ և հայ ձայնագրագէտին պիտի ասէք Եւրոպականին հետեւելով եմ զրել երկու արշեստով շաղախուած եղբայր ուժից վեր բան բռնելը առողջութեան վեաս է մի՛թէ չէք լսել բժիշկներից

Երգուրանիդ մէջ եղած երգերը ընդ ամենը 50 հատ լինելով նոցա ուսուցանելու ժամանակամիջոցը շորս տարի էք որոշել ուրեմն եթէ 100 երգ լինէր պիտի որոշէիք 8 տարի սպասումը ամբողջ ձայնագրութիւնը քանի տարի աւարտել տալուդ կարգադրութեան Եւ ի՞նչ զարմանուի բան զիւղացի անգրագէտ մանուկը բարիկենդանների աղատ օրերը 10 — ից աւելի բերանացի երգ է սովորում իսկ զպրոցում մշտապէս պարապող մանուկը ամբողջ տարին 12 ։ երգ պիտի սովորէ ով է ասում թէ Եղնիկ քահանայն Դիօք չզիտէ իրաւ որ զժուարանումը մի երգ ցոյց տալ որ չորս տարուայ ընթացքում աշակերտը չսովորէ ինչպէս խնդրել էիք այդ հարցին բացասական պատասխան չտալ ներկցէք

Գրումէք իրր երգարանիդ Աղօթքներ և Յաւելուտծ վերնագրերով մասերին չեմ հաւանել և թէ կուսակրօն լինելով աւելի յարմար պիտի զատէի Աղօթքներիդ փոխարէն դնել Այսօք անձու և նորասութենքնու շարականները իսկ Յաւելուտծով արգելել մանկան իւր խաղեր խաղալուց որով և մեծ զարմանքով մանկավարժութեան հետ ծանօթութիւն չունեալս էք ցոյց տալիս Նախ երգարանդ քննած ժամանակ երբէք ակնարկութիւն չեմ արել բառերի վերայ այս լաւ է միւսը վատ է խարիր դնելով զիտենալսվ որ նորա ձեր հեղինակածը չեն այլ այն լիսի ուսման գրգիռ շարժող հեղինակ անձանց աշխատութեան արգասիք որոց երախտագէտ հոգւով պատուելու պարտական ենք միշտ ես և դոււ Աւստի իմ շհաւանելս միայն եղել է նոցա բառերի իմաստին ընդդէմ ունեցած անքնական և անախորժ եղանակ կամ ձայները և ոչ բառերը օրինակով հասկացնեմ կարելի քատի Այսօք յուրաքանչի վերայ զնել մեր

Ժողովրդական լեռներէց մէկի ձայնը, ոչ ապաքէն իւրաքանչիւր զրուածք իրեն մոքին յարմար եղանակ պիտի ունենայ, իսկ զուք չհանկանալով այս արել էք, և ինձ մեղագրումէք թէ, եղանակների բնաւորաւթեան հետ էլ ծանօթ չեմ: Երկրորդ եմէ առաջարկէի էլ վերոյզրեալ Աղօթքների տեղ գնել Այսօք շուրջ և հորառութեղեւուը, միթէ քո ընտրած, Աստուծոյ բարկութիւնը քան զթութիւնը շարժող աղօթքներից անպիտան պիտի լինէին. սորանից երկումէ որ, զուք էլ հակառակ ձեր կոչման և աստիճանի, Աստուծածպաշտութեան հետ ծանօթ չէք: Իսկ ինչ վերաբերումէ, թէ Յաւելուածով կամցել եմ արգելել մանկան խաղեր խաղալուց, այդ կարգագրութիւնը կանէի նոյն իսկ ձեզ համար . . .

Ասիայի երաժիշտների մէջ ընդունուած է առհասարակ, երբ մի երգիւ երգ է երգում: միւս ընկերը անմիջապէս ձայն (Դէմ) է պահում: և այս նորահամար, թէ ընկերին շնչահատութեան միջոց օգնած լինի, և թէ, որ աւելի հաւանական է, երգին բուն իսկ համեզութիւն և ներդաշնակութիւն տայ: Սոյն այս ձեւը աւելի գեղեցիկ կանոնաւորուած տեսնումնէ և Եւրոպական երգերի մէջ, երբ խմբովին են երգում: օրինակ, մի երգ, երբ բազմութեամբ հարկաւորվումէ երգել, երկու հոգի միատեղ կանգնած ըստ պահանջման կանոնի և արուեստին՝ լոկ վայր վեր խրոխտ ձայնով օ՞ օ՞ օ՞ են անում: երեքը նրանց հակառակ բարձր և սուր ձայնով է՞ է՞ է՞ են անում: իսկ չորսը, նոցա երգից յատկացած բաժնին առանց խառնուելու, շարունակումն բառերով միասին երգելոյ և պատճառն ի՞նչ է որ այսպէս են անում: եմէ ոչ երգուած երգը աւելի տպու աւելի զմայլեցուցիւ կերպարանք ստանայ: ուրեմն զարմանալու ի՞նչ հարկ կար ձեզ, երգարանիդ երկրորդ և երբորդ մասերի երգերի համար յիշած այս խօսքերիս վերայ թէ, յև շուրջ ցոյց տալով կամցել էք երգերին ներդաշնակութեան ոգի տալ: բայց իրաւ ցաւալին այս է որ նոյն ներդաշնակութիւն ստացող երգերից չեն ձեր ընտրածը, ապա թէ ոչ յև շուրջ գործ է զրում ոչ միայն մարդ շողոքորթելու և խաբելու մէջ, ոչ միայն իւր սուտը ճշմարտութիւն ձեւացնելու մէջ, այլև երգերի մէջ: որոց և զուք անխափի գործ էք զրել վերոյգրեալ հատուածներում: և չէք հասկացել թէ ձեւ շարժումը երգի բուն իսկ համեմիչ աղն է:

Ինձ թուումէ թէ հայկական եղանակների քաղցրութիւնը, դեռ ևս զդացած չէք, և այս նկատվումէ նորանից, որ մի քանի երկրորդ ձայն երգերի ձայնաստիճանը փոխելով, միջից ձայնի կտորներ հանելով և վերջապէս խորթ ու բորդ կարկատելով եւրոպականացրել էք. Եւրոպա՛, ի՞նչ երջանիկ աշխարհ ես, դարիս տգետն անգամ անձկանօք քո անունն է յիշում, ծածկելով իրեն քո իմաստութեան վերաբերուով: Պատուական եղբայր, որ և իցէ մի ազգի անհատ հարկը պահանջած միջոց նախանձախնդիր է միշտ իւր նախնական սովորութիւններին և ծէսերին են, և լն. իսկ զուք ինչո՞ւ մեր հայկական սքամչելի շարականներից ծընուած երգեր և խաղեր Եւրոպացւոց էք ընծայում: այն ևս այնպիսի

երգեր, որոց եթէ երգելու լինէիք մի հայ աշուղը մօտ, նա խկոյն իւր զիտեցած խաղերի մէկին կնմանացնէր անշուշտ, և իմ դոցա համար պարզապէս երկրորդ ձայն են ասելը կճշգրտեր, որի վերայ բարձրաձայն ծիծաղցել էիք. Ուրեմն ձեր կարծիքով հայերը բնաւ սեպհական եղանակ չունին. ուրեմն և մեր մեծագործ Հայրապետի շնորհիւ սովորած ձայնազրութիւնը միայն ձեռնոտու պիտի լինի այսուհետեւ շարականներ միմեանցից որոշելու և զրելու մէջ, իսկ երգեր ոչ բնաւ Ահա նոր հեարագիտութիւն, որ լսու կընծայէ Եղնիկ քահանայն, Եղանակների մասին խօսելով շատ ճշմարիտ էք ասել, այլ է Եւրոպական, այլ է հայկականն. և ես գործն համաձայն եմ. բայց դուք հասկանալու դ չափ, գործքով հակառակն էք արել.

Երգեր ձայնազրելու համար ասումէք. « ամենայն ձայնից կարելի է սկսել, նայելով մարդոց ձայներին, թէ ով է երգում » . ուրեմն եթէ երդը երգումէ մանուկը, ուրիշ ձայնանիշներով պիտի զրել. եթէ խռապու ծերունին՝ ուրիշ, եթէ երիտասարդը՝ ուրիշ, ափսոն որ կանաց ձայնին համապատասխան յատուկ ձայնանիշեր չեք որոշել. Այսպիսի մի կանան հայերը չունենալուց զատ, չեմ կարծում որ Եւրոպագիք էլ ունենան, և եթէ անհրաժեշտ էր սորա ունենալը, անշուշտ կամ երդարանիդ յառաջաբանի մէջ կաւելացնէիք կամ ւ ւ - ներով հաստացրած Գասագրքիդ մէջ, որ չեք արել:

Եերջացնելով յօդուածս, զարձեալ խորհուրդ կտամ այսպիսի դէպքերում զիմել միշտ ձեղանից և ինձանից հմուտ ձայնազրագէտներին առանց վշտանալոյ և առանց ինքնահաւանանութեան, որովհետեւ մի փոքրիկ սխալն անգամ ոչնչացնումէ ամբողջ աշխատութեան անունը:

### Սահման Սահմանագ.

### ՆԱՄՈԿ ԱՍՏԻՍԽԱՆԻՑ.

Աստրախանոյ Հայոց Եկեղեցեաց Զափարերական մատեաններից երեսում են, որ ամբողջ 1880 թուականի ընթացքում եղել են ծնունդք արուաց 64. իգաց 64. վախճանք արուաց 82. իգաց 79. այս երկուց սեռից վախճաններից 29ը թոքախտութեան են զոհուել. և պսակք 29. այս ցուցակի մէջ տեսնուումէ՝ որ երկուց սեռից վախճանը երկուց սեռից ծնունդից 33 թուով աւելի է, ուրեմն Աստրախանոյ Հայ բնակչաց թիւը 1880 թուականին 33 թուով պակասուել է, և այս Աստրախանոցի Հայերի նուազանալը վաղուց է արդէն՝ որ չափարերական մատեանները իւրաքանչիւր տարի յայտնումն մէջ, զարմանտլիւ երեսյթ. վիճակագրական տեղեկութիւններից ակնյայտնի երեսում են՝ որ շատ քաղաքներումը Հայ բնակչաց թիւը չետղհետէ յաւելանում է, իսկ Աստրախանումը պակասում, Աստրախա-